ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ՝ ՈՐՊԷՍ ՏԱՐԱԾՔԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ալեքսանդր Մանասեան

Միջազգային իրաւունքի եւ հիմնախնդրի իրաւական փաքեթի հիմնական փաստաթղթերի տեսակէտից Լեռնային Ղարաբաղի միջազգային իրաւական կարգավիճակի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան՝ որպէս Խ.Ս.Հ.Մ. կազմալուծման ընթացքում կայացած նորանկախ պետութեան օրինականութեան եւ, հետեւաբար, նրա ճանաչման օրինականութեան հարցերը որեւէ բարդութիւն չեն ներկայացնում: Այդ փաքեթը, որն առայսօր դրուած չէ բանակցութիւնների սեղանին, լիիրաւ հիմքեր է տրամադրում ապացուցելու, որ 1991 թ. իր անկախութիւնը հռչակած Լ.Ղ.Հ. հետ սահմանակից կամ տարածաշրջանի հետ պատմական առընչութիւն ունեցող ոչ մի երկիր, բացառութեամբ Հայաստանի, միջազգային իրաւական կամ պատմական որեւէ հիմք չունի յաւակնելու Լ.Ղ.Հ. կողմից վերահսկուող տարածքներին:

Անդրադառնենք դրանց:

Լեռնային Ղարաբաղում Պարսկաստանի իշխանութիւնը վերացել է 1813 թուականին:

Նախ՝ սահմանակից Պարսկաստանի մասին: Այս երկիրն իր իրաւունքները Լեռնային Ղարաբաղում կորցրել է 1813 թուականին, երբ Ղարաբաղի հայկական Գիւլիստան գիւղում կնքուած եւ միջազգային շրջանակներում լայնօրէն յայտնի ռուս-պարսկական պայմանագրով Ղարաբաղի եւ Գանձակի խանութիւնները, որոնք՝ որպէս վարչաքաղաքական միաւորներ, ստեղծուած էին հիմնականում Լեռնային Ղարաբաղի տարածքում, վերջնականապէս անցան Ռուսաստանի գերիշխանութեան տակ:

Լեռնային Ղարաբաղում ցարական Ռուսաստանի իշխանութիւնը վերացել է 1917 թուականին:

Ցարական Ռուսաստանի տիրապետութիւնն Անդրկովկասում (եւ, բնական է, Լեռնային Ղարաբաղում) աւարտուեց 1917 թուականին, երբ Հոկտեմբերեան Յեղափոխութեան արդիւնքում Ռուսական Կայսրութիւնը թողեց պատմութեան թատերաբեմը:

1918-1920 թուականներին Լեռնային Ղարաբաղը եղել է փաստացի անկախ վարչաքաղաքական միաւոր:

1918-1920 թուականներին Լեռնային Ղարաբաղը **դէ ֆակտո** անկախ, բայց միջազգայնօրէն չճանաչուած պետական կազմաւորում էր օրինական իշխանութիւններով, որոնք վերահսկում էին երկրամասի քաղաքական, տնտեսական, մշակութային կեանքը եւ ապահովում Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանութիւնը արտաքին ոտընձգութիւններից եւ առաջին հերթին՝ զաւթողական նպատակներով Անդրկովկաս խուժած թուրքերից ու նրանց սուինների վրայ Բաքուում ստեղծուած մուսաւաթական Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետութեան զինուած կազմաւորումներից: Այդ տարիներին ղարաբաղցիների կողմից ընտրուած բարձրագոյն իշխանութիւններն՝ ազգաբնակչութեան լիազօր ներկայացուցիչների համագումարների միջոցով, բազմիցս արտայայտել են Հայաստանի Հանրապետութեան կազմում լինելու իրենց կամքը եւ մերժել երկրատարածքի նկատմամբ մուսաւաթական Ադրբեջանի յաւակնութիւնները:

Միջազգային հանրութիւնը, ի դէմս Ազգերի Լիգայի, օրինական չի ճանաչել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ մուսաւաթական Ադրբեջանի յաւակնութիւնները եւ մերժել է վերջինիս Լիգա ընդունուելու դիմումը հէնց այն հիմնաւորումով, որ նա իշխանութիւն ու վերահսկողութիւն չունի այն տարածքներում (դա եւ՛ Նախիջեւանն էր, եւ՛ Լեռնային Ղարաբաղը), որոնք նա փորձում է ներկայացնել որպէս իրենը:

1921 թուականին Լեռնային Ղարաբաղը հռչակուել է Խորհրդային Հայաստանի անկապտելի մասը:

1921 թուականին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչութեան ազատ կամքի արտայայտման հիման վրայ, ինչպէս նաեւ դէմ գնալով հայկական տարածքների նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի յաւակնութիւններին, Լեռնային Ղարաբաղի երկրամասը հռչակուեց Խորհրդային Հայաստանի անկապտելի մասը:

1921 թուականին Լեռնային Ղարաբաղում իր իրաւունքներն է վերջնականապէս կորցրել Խորհրդային Ռուսաստանը: Խորհրդային տարիներին Լեռնային Ղարաբաղը եղել է ազգային-պետական կազմաւորում Ադր.Խ.Ս.Հ.

կազմում 1921 թուականի Յուլիսին ընդունուած Կովբիւրոյի որոշման համաձայն:

Նոյն 1921 թուականին Անդրկովկասում Ռուսական Կայսրութեան մեծապետական իրաւունքներից հրաժարուած Խորհրդային Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղում վերջնականապէս կորցրեց իր իրաւունքները այն բանց յետոյ, երբ իր իսկ պարտադրանքով արդէն Խորհրդային Հայաստանի մաս դարձած Լեռնային Ղարաբաղը՝ Ռուսաստանի Կոմունիստական (բոլշեւիկեան) կուսակցութեան Կովկասեան Բիւրոյի (Կովբիւրո) որոշմամբ, լայն իրաւունքներով մարզային ինքնավարութեան պետական իրական կարգավիճակով մտցուեց Խորհրդային Ադրբեջանական Հանրապետութեան՝ որպէս ոչ-ազգային, մուսուլմանների ու հայերի միջազգային հանրապետութեան սահմանները*:

1991 թուականի Օգոստոս-Հոկտեմբերին Խորհրդային Ադրբեջանը թողեց պատմութեան թատերաբեմը առանց իրաւայաջորդի:

Խորհրդային Ադրբեջանական Հանրապետութեան իրաւունքները Լեռնային Ղարաբաղում դադարեցին 1991 թուականի Օգոստոս-Հոկտեմբեր ամիսներին, երբ առանց իրաւայաջորդի դադարեց գոյութիւն ունենալ որպէս հայերի ու մուսուլմանների «միասնական պետական միութիւն» հիմնուած խորհրդային այդ հանրապետութիւնը:

Նոյն ամիսներին ասպարէզ իջած Ադրբեջանական Հանրապետութիւնը, անկախութեան վերականգնման Հռչակագրով (1991 թ., Օգոստոս) եւ պետական անկախութեան Սահմանադրական փաստաթղթով (1991 թ., Հոկտեմբեր) հրաժարուեց Խորհրդային Ադրբեջանի իրաւայաջորդութիւնից եւ վերադառնալով 1918-1920 թուականների իրողութիւններին՝ վերականգնեց Ազգերի Լիգայի կողմից **դէ իւրէ** չճանաչուած մուսաւաթական Ադրբեջանական Հանրապետութեան պետականութիւնը, որը չունէր ճանաչուած սահմաններ եւ չէր վերահսկում ո՛չ Լեռնային Ղարաբաղը, ոչ էլ Նախիջեւանը:

1991 թուականի Սեպտեմբեր-Դեկտեմբերին Լ.Ղ.Հ-ն կայացել է մերօրեայ Ադրբեջանական Հանրապետութեանը չպատկանող տարածքներում:

1991 թուականի Սեպտեմբեր-Դեկտեմբեր ամիսներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը կայացել է այն տարածքների մի մասի վրայ, որոնց նկատմամբ նախկին Ադր. Խ.Ս.Հ. իրաւայաջորդութիւնից հրաժարուած եւ մուսաւաթական Ադրբեջանի պետականութիւնը վերականգնած Բաքուն, գործող բազմակողմ միջազգային պայմանագրերի համաձայն, կորցրել էր իր իրաւունքները: 1991 թուականի Հոկտեմբերին արդէն Նախիջեւանը եւ Լեռնային Ղարաբաղը (ողջ Լեռնային Ղարաբաղը), Կարսի պայմանագրի (1921 թ. Հոկտեմբեր) եւ Կովբիւրոյի որոշման համաձայն, **դէ իւրէ** նորանկախ Ադրբեջանական Հանրապետութեան տարածքները չէին:

1991 թուականի Սեպտեմբերին, երբ հռչակուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, միայն Հայաստանի Հանրապետութիւնն էր, որ կարող էր որպէս Խորհրդային Հայաստանի իրաւայաջորդ վիճարկել Ղարաբաղի ժողովրդի այդ վճիռը: Իրաւական տեսակէտից նրա փաստարկը անքասիր պիտի լինէր. Խորհրդային Հայաստանին պատկանող Լեռնային Ղարաբաղը մըտցրել է (օրինական, թէ ապօրինի որոշումով՝ այդ դէպքում միեւնոյն է) Խորհրդային Ադրբեջանական Հանրապետութեան սահմանները, որն առանց իրաւայաջորդի թողել է պատմական ասպարէզը եւ այդ պայմաններում ինքնաբերաբար ինքը նորից դառնում է այդ տարածքների օրինական տէրը: Սակայն Հայաստանի Հանրապետութիւնը գերադասեց չբարդացնել իրավիճակը տարածաշրջանում, չգրգռել Բաքուի խանոը եւ համաձայնել **դէ իւրէ** իրեն պատկանող տարածքներում Լ.Ղ.Հ. կայացմանը:

Ընդհանրացնելով վերոշարադրեալը՝ կարելի է արձանագրել, որ 1991 թուականի Դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան հանրաքուէն կայացել է այն տարածքներում, որտեղ միջազգայնօրէն ճանաչած էր ազգային պետականութիւն (լայն իրաւունքներով մարզային ինքնավարութիւն) ունենալու հայերի իրաւունքը եւ երբ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ դադարել էին Բաքուի իրաւունքները՝ նախկին Ադր. Խ.Ս.Հ. իրաւայաջորդութիւնից նորանկախ Ադրբեջանի Հանրապետութեան հրաժարման պատճառով:

Իրաւական լրացուցիչ, բայց եւ անհրաժեշտ հիմք էր նաեւ Հայաստանի լռելեայն համաձայնութիւնը, որպէսզի այդ պահին պատմականօրէն եւ իրաւաբանօրէն իրեն պատկանող տարածքում հռչակուի մի նոր պետութիւն: Դա ակնյայտ զիջում էր, որ կատարուեց յանուն տարածաշրջանային խաղաղութեան եւ ի նշան Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչութեան ինքնորոշման իրաւունքի ճանաչման:

1991 թուականի Սեպտեմբերին, առաջնորդուելով այդ քաղաքական դիրքորոշումով՝ Հայաստանի Հանրապետութիւնը անկախութեան հանրաքուէ անցկացրեց Խորհրդային Հայաստանի սահմաններում:

Վերջերս Հայաստանի Հանրապետութիւնը կատարեց երկրորդ զիջումը՝ համաձայնելով, որպէսզի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, եթէ նա կամենում է, Ադրբեջանական Հանրապետութեան հետ միասին վերստեղծի հայ-ադրբեջանական «միասնական պետական միութիւնը» (որ այս անգամ Ե.Ա.Հ.Կ. համանախագահների կողմից ներակայացուած է «ընդհանուր պետութիւն» անուանմամբ), որպիսին եղել է նախկին Ադր. Խ.Ս.Հ.ն: Բաքուն մերժել է համանախագահների նոր առաջարկը, եւ յայտնի չէ, թէ ի՞նչ նոր զիջումներ նա կը պահանջի անել հայկական կողմերից, եթէ մի օր այնուամենայնիւ համաձայնուի այդ գաղափարի շուրջ վերսկսել բանակցութիւնները:

Ստացւում է, որ 1991ից ի վեր յանուն տարածաշրջանային անվըտանգութեան եւ խաղաղութեան, զիջումների են գնում միայն հայկական կողմերը: Այս պարագաներում յայտնի չէ, թէ ի՞նչ իմաստ են դնում Մինսկի Խմբի համանախագահները բանակցային գործընթացում այնքան յաճախակի օգտագործող «փոխ-զիջում» հասկացութեան մէջ, երբ խօսքը վերաբերում է Բաքին: Թէ ի՞նչ է զիջում Բաքուն, մինչ օրս յայտնի չէ, եթէ հարցը դիտարկի հիմնախնդրի միջազգային իրաւական հիմքերի տեսակէտից:

Հանրապետութեան տարածքը չէ:

Եթէ Ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման եւ տարածաշրջանային քաղաքական գործընթացների հեռանկարը գնահատուի խնդրի վերոյիշեալ միջազգային իրաւաքաղաքական հիմքերի ու փաստերի եւ յատկապէս այն իրողութեան տեսակէտից, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը կազմաւորուել է մերօրեայ Ադրբեջանական Հանրապետութեանը չպատկանող տարածքների վրայ, ապա միջնորդների՝ ընդհանուր պետութեան կապակցութեամբ կատարած առաջարկի յաջողութեան հնարաւորութիւնը կախուած կը լինի նրանից, թէ նրանց ինչքան կը յաջողուի նման հանգուցալուծման միջազգային քաղաքական նպատակայարմարութիւնը «թարգմանել» կողմերի շահերի լեզուի:

Կողմերը՝ Ստեփանակերտը, Երեւանը եւ Բաքուն, պէտք է աւելի յստակ պատկերացում ունենան, թէ յատկապէս քաղաքական ու տնտեսական տեսակէտներից ինչո՞վ է իրենց համար շահեկան հարցի նման լուծումը:

Դա առաւել կարեւոր է հայկական կողմերին, որոնց համար ընդհանուր պետութեան գաղափարի հետ համաձայնութիւնը արդէն իսկ զիջում է: Ինչ վերաբերում է ղարաբաղեան կողմին, ապա ինչպէս բազմիցս յայտարարել են Լ.Ղ.Հ. իշխանութիւնները, նրան առաջին հերթին կը հետաքրքրի իր միջազգային իրաւական կարգավիճակի հարցը: Այլ կերպ՝ առաջնահերթութիւնների ցուցակում Ստեփանակերտի համար այն հարցն է, թէ վերընտեղծուող նոր հայ-ադրբեջանական պետութեան կազմում ինչպիսի՞ պիտի լինի իր՝ որպէս միջազգային իրաւունքի ենթակայի կարգավիճակը:

■

Հակամարտութեան կարգաւորման առաջարկները յաջողութիւն կ՝ունենան, եթէ փաստեն այն իրողութիւնը, որ Լ. Ղարաբաղը ունի որոշակի միջազգային իրաւական կարգավիճակ, ըստ որի նա մերօրեայ Ադրբեջանական

Յ.Գ. Գործող միջազգային պայմանագրերի համաձայն, որոշակի միջազգային իրաւական կարգավիճակ ունի նաեւ Նախիջեւանը:

* Այդ որոշումը ապօրինի ճանաչելու դէպքում (որոշումն «ընդունուեց» առանց քննարկման ու բուէարկութեան. Կենտրոնի ներկայացուցիչ Ստալինը Բիւրոյի անդամներին միայն ծանօթացրեց որոշման տեքստին) ողջ Լեռնային Ղարաբաղը եւ ոչ թէ նրա մի մասի վրայ հետագայում ստեղծուած Ինքնավար Մարզը, պէտք է դիտուի որպէս Հայաստանից բռնազաւթուած տարածք: Նոյն որոշումը օրինական ճանաչելու դէպքում (ինչի վրայ պնդում էին Մոսկուան եւ Բաքուն խորհրդային բոլոր տարիներին), այն պէտք է հաւասարեցուի միջ-պետական բազմակողմ պայմանագրի: